# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ք. Սիսիան, Սիսական 31
Հեռախոս (0283) 2-33-30 ֆաքս (0283) 2-33-30
էլ. հասցե http://www.sisian.am/
Էլ. փոստ sisiancity@sisian.am, sisisn.syuniq@mta.gov.am

**Թիվ 1185**
*05 մայիսի 2022թ.*

**ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ**
**ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ**
**Է. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆԻՆ**

***Հարգելի պարոն Մարտիրոսյան***

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 29-ի արտահերթ նիստի թիվ 32-Ա, 33-Ն, 34-Ա, 35-Ա, 36-Ա և 37-Ա որոշումները՝ կից հավելվածներով:

Առդիր՝ 15 թերթ:

**Պաշտոնակատար՝** **Ա. Հակոբջանյան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թվականի թիվ 32-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 29-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածով, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով _7_ կողմ, _-_ դեմ, _-_ ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

Հաստատել համայնքի ղեկավարի պաշտոնակատարի ներկայացրած Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 29-ի արտահերթ նիստի օրակարգը.

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի թիվ 76-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին:
2. Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով 2022 թվականին բյուջետային ֆինանսավորման ծրագրային հայտեր ներկայացնելուն համաձայնություն տալու մասին:
3. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող հողամասի օգտագործման սխեման հաստատելու մասին:
4. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի թիվ 09-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
5. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 19-ի թիվ 84-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝** **Ա. Հակոբջանյան**

2022թ. ապրիլի 29
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թվականի թիվ 33-Ն

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 76-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և 90-րդ հոդվածի 6-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով ու «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 7 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 76-Ն որոշմամբ հաստատված 2022 թվականի համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից 29143,170 հազար դրամ ուղղել համայնքի բյուջեի ֆոնդային մաս՝ «Արտադպրոցական կրթություն» բաժնի բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման «Շենքեր և շինությունների կառուցում» հոդվածին՝ Սիսիանի համայնքի ֆուտբոլի դպրոցի հարակից տարածքում դրենաժային համակարգի կառուցման նպատակով:
2. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 24-ի «Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի 2022 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 76-Ն որոշման մեջ կատարել փոփոխություններ և լրացումներ՝ համաձայն 1-4 հավելվածների:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝** **Ա. Հակոբջանյան**

2022թ. ապրիլի 29
ք.Սիսիան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու
2022 թվականի ապրիլի29-ի թիվ 33-Ն որոշման

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 76-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ԿԵՏԻ 1-ԻՆ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամ)

| Տողի N | Եկամտատեսակները | Հոդվածի NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| 1000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200 + տող 1300) այդ թվում՝ | | 1718817.9 | 1592273.0 | 175552.3 |
| 1390 | 3.9 Այլ եկամուտներ, (տող 1391 + տող 1392 + տող 1393), այդ թվում՝ | 7452 | x | 0.0 | 49007.5 |
| 1391 | Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր | | 0.0 | x | 0.0 |
| 1392 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր | | 49007.5 | x | 49007.5 |
| 1393 | Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ | | 0.0 | 0.0 | x |

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի
համայնքի ավագանու 2022 թվականի
ապրիլի 29-ի թիվ 33-Ն որոշման

# ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 76-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ԿԵՏԻ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | 2263086.1 | 1592273.0 | 719820.5 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝ | 572002.4 | 527629.2 | 44373.2 |
| 2951 | 9 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | 223018.4 | 192895.2 | 30123.2 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝ | 261380.0 | 310387.5 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝ | 261380.0 | 310387.5 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | 261380.0 | 310387.5 | 0.0 |

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի
ավագանու 2022 թվականի ապրիլի 29-ի թիվ 33-
Ն որոշման

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 76-Ն ՈՐՈՇՄԱՆ 4-ՐԴ ԿԵՏԻ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամով)

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| 4000 | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 4050 + տող 5000 + տող 6000) այդ թվում՝ | x | 2263086.1 | 1592273.0 | 719820.5 |
| 4700 | 1.7 ԱՅԼ ԾԱԽՍԵՐ (տող 4710 + տող 4720 + տող 4730 + տող 4740 + տող 4750 + տող 4760+ տող 4770), այդ թվում՝ | x | 264950.0 | 313957.5 | x |
| 4770 | ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 4771), որից՝ | x | 261380.0 | 310387.5 | 0.0 |
| 4771 | - Պահուստային միջոցներ/վարչական/ | 4891 | 261380.0 | 310387.5 | x |
| 4771Բ | Պահուստային միջոցներ /ֆոնդային/ | 4891 | 0.0 | x | 0.0 |
| 5000 | Բ. ՈՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱԿՏԻՎՆԵՐԻ ԳԾՈՎ ԾԱԽՍԵՐ (տող 5100 + տող 5200 + տող 5300 + տող 5400), այդ թվում՝ | x | 724820.5 | x | 724820.5 |
| 5100 | 1.1. ՀԻՄՆԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐ (տող 5110 + տող 5120 + տող 5130), այդ թվում՝ | x | 724820.5 | x | 724820.5 |
| 5110 | ՇԵՆՔԵՐ ԵՎ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ (տող 5111 + տող 5112 + տող 5113), որից՝ | x | 722005.5 | x | 722005.5 |
| 5112 | - Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 32813.8 | x | 32813.8 |
| 5113 | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | 689191.8 | x | 689191.8 |

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

Հավելված 4
ՀՀ Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի
ավագանու 2022 թվականի ապրիլի 29-ի թիվ 33-
Ն որոշման

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի ԹԻՎ 76-Ն ՈՐՈՇՄԱՆ 7-ՐԴ ԿԵՏԻ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ

(հազար դրամով)

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակա | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 |
| 2000 | X | X | X | ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ (տող 2100 + տող 2200 + տող 2300 + տող 2400 + տող 2500 + տող 2600 + տող 2700 + տող 2800 + տող 2900 + տող 3000 + տող 3100) | | 2263086.1 | 1592273.0 | 719820.5 |
| 2900 | 9 | 0 | 0 | ԿՐԹՈՒԹՅՈՒՆ (տող 2910 + տող 2920 + տող 2930 + տող 2940+ տող 2950 + տող 2960 + տող 2970 + տող 2980), այդ թվում՝ | | 572002.4 | 527629.2 | 44373.2 |
| 2951 | 9 | 5 | 1 | Արտադպրոցական դաստիարակություն | | 223018.4 | 192895.2 | 30123.2 |
| | | | | - Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում | 4251 | 30000.0 | 30000.0 | 0.0 |
| | | | | - Սուբսիդիաներ ոչ ֆինանսական պետական (համայնքային) կազմակերպություններին | 4511 | 162895.2 | 162895.2 | 0.0 |
| | | | | '-Շենքերի և շինությունների կառուցում | 5112 | 30123.2 | 0.0 | 30123.2 |
| 3100 | 11 | 0 | 0 | ՀԻՄՆԱԿԱՆ ԲԱԺԻՆՆԵՐԻՆ ՉԴԱՍՎՈՂ ՊԱՀՈՒՍՏԱՅԻՆ ՖՈՆԴԵՐ (տող 3110), այդ թվում՝ | | 261380.0 | 310387.5 | 0.0 |
| 3110 | 11 | 1 | 0 | ՀՀ կառավարության և համայնքների պահուստային ֆոնդ , որից՝ | | 261380.0 | 310387.5 | 0.0 |
| 3112 | 11 | 1 | 2 | ՀՀ համայնքների պահուստային ֆոնդ | | 261380.0 | 310387.5 | 0.0 |
| | | | | - Պահուստային միջոցներ/վարչական/ | 4891 | 212372.6 | 261380.0 | 0.0 |
| | | | | Պահուստային միջոցներ /ֆոնդային/ | 4891 | 0.0 | 0.0 | 0.0 |

ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ՝ Ա.ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թվականի թիվ 34-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՀԱՏԿԱՑՈՒՄՆԵՐ (ՍՈՒԲՎԵՆՑԻԱՆԵՐ) ՍՏԱՆԱԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ 2022 ԹՎԱԿԱՆԻՆ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՀԱՅՏԵՐ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ և 25-րդ կետերով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի առաջարկությունը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 7 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Տալ համաձայնություն ՀՀ պետական բյուջեից նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ) ստանալու նպատակով Սիսիանի համայնքի 2022 թվականի բյուջետային ֆինանսավորման ներկայացվող հետևյալ ծրագրային հայտերին՝
   1) «Սիսիանի համայնքի Աղիտու և Վաղատին բնակավայրերում խմելու ջրագծերի վերանորոգում»,
   2) «Սիսիանի համայնքի Ադամյան, Իսրայելյան և Պարույր Սևակի փողոցների կապիտալ վերանորոգում»:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի փոխարինողին՝ ապահովել սույն որոշումից բխող գործառույթների իրականացումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝** **Ա. Հակոբջանյան**

2022թ. ապրիլի 29
ք.Սիսիան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թվականի թիվ 35-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՍԽԵՄԱՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 31-րդ կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 9-ի թիվ 980-Ն որոշումն ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 7 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի սեփականություն հանդիսացող, կառուցապամաան նպատակով նախատեսվող հողամասի օգտագործման սխեման՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի փախարինողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝** **Ա. Հակոբջանյան**

2022թ. ապրիլի 29
ք.Սիսիան

Հավելված 1
ՀՀ Սյունիքի մարզի
Սիսիանի համայնքի ավագանու
2022թ. ապրիլի 29-ի թիվ 35-Ա որոշման




Հատկացվող տարածք 70քմ

Սիսիանի համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա. Հակոբջանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թվականի թիվ 36-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ի ԹԻՎ 09-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի առաջին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով և նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 7 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 31-ի «Սիսիանի քաղաքապետարանի և Ռոբերտ Պետրոսյանի միջև կնքված հողամասի վարձակալության պայմանագրում լրացում կատարելու և հողամասն ուղղակի վաճառքի միջոցով օտարելու մասին» թիվ 09-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 2-րդ կետի «342x1000=342000 (երեք հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ կադաստրային արժեքով» բառերը փոխարինել «1221x1000=1221000 (մեկ միլիոն երկու հարյուր քսանմեկ հազար) ՀՀ դրամ արժեքով» բառերով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի փոխարինողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝ Ա. Հակոբջանյան**

2022թ. ապրիլի 29
ք.Սիսիան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# ՈՐՈՇՈՒՄ

29 ապրիլի 2022 թվականի թիվ 37-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԻՍԻԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 19-Ի ԹԻՎ 84-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով և 34-րդ հոդվածով ու նկատի ունենալով համայնքի ղեկավարի պաշտոնակատարի առաջարկը, որոշման նախագծի քվեարկության արդյունքներով 7 կողմ, - դեմ, - ձեռնպահ

*Սիսիանի համայնքի ավագանին որոշում է՝*

1. Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Սիսիանի համայնքի ավագանու 2020 թվականի օգոստոսի 19-ի «Համայնքի վարչական սահմաններում գտնվող պետության և համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի մրցութային հանձնաժողով ստեղծելու և անհատական կազմը հաստատելու մասին» թիվ 84-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն և որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի «Վ. Իվանյան - համայնքի ղեկավարի տեղակալ, հանձնաժողովի նախագահ, աճուրդավար» բառերը փոխարինել «Ա. Հակոբջանյան - համայնքի ղեկավարի պաշտոնակատար, հանձնաժողովի նախագահ, աճուրդավար» բառերով:
2. Համայնքապետարանի աշխատակազմի քարտուղարի փոխարինողին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ -7 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԱՌԱՔԵԼՅԱՆ Հ.Հ.

ԳԵՎՈՐԳՅԱՆ Գ.

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ Հ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Գ.

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ Է.

ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ Ա.

ՊՈՂՈՍՅԱՆ Վ.

**Համայնքի ղեկավարի պաշտոնակատար՝** **Ա. Հակոբջանյան**

2022թ. ապրիլի 29
ք.Սիսիան